ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Սյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2014թվականի N 13-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխության մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
2. Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 118.8քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը աճուրդի և 270.0քմ մակերեսով հողամասը կրկնաճուրդի միջոցով օտարելու թույլտվություն տալու, ինչպես նաև մեկնարկային գները հաստատելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
3. Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 4015.0քմ ընդհանուր մակերեսով թվով 3 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքովտրամադրելու թույլտվություն տալու, ինչպես նաև հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գները հաստատելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
4. Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 5880.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու, ինչպես նաև հողամասերի վարձակալության իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գները հաստատելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
5. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ. բյուջեի վարչական մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
6.Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան

7. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
8. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
9. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
10. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
11. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
12. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
13. Դիլիջանի Գետափնյա փողոցի թիվ 88/2 հասցեի 37.0քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
14. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի փոփոխությունը հաստատելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
15. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի փոփոխությունը հաստատելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
16. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի փոփոխությունը հաստատելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
17. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
18. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
19. Դիլիջանի համայնքում արքայազն Չարլզի անվան փողոց անվանակոչելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
20. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի օգոստոսի 7-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի խմելու ջրի ու կոյուղու համակարգերը «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը անհատույց օգտագործման հանձնելու մասին» թիվ 145 որոշման մեջ լրացում կատարելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2014թվականի N 14-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2013թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 1414-Ն որոշման 5.7 կետի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 04-ի թիվ 228- Ն որոշմամբ հաստատված համայնքի 2014 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թվականի բյուջեի վարչական մասի եկամուտները «Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ՝ սուբվենցիա» - եկամուտներն ավելացնել 2913.5 հազ.դրամ
2. Դիլիջանի քաղաքային համայնքի 2014 թվականի բյուջեի վարչական մասի ծախսերը «Արտադպրոցական դաստիարակություն» /բաժին 09, խումբ 05 , դաս 01. հոդված 4511/ - 2913.5 հազ. դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2014թվականի N 15-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 118.8ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ԵՎ 270.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2014թ. փետրվարի 3-ի թիվ 34-Ա որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 118.8քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը աճուրդի և 270.0քմ մակերեսով հողամասը կրկնաճուրդի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով:
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Դիլիջանի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 118.8քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը աճուրդի և 270.0քմ մակերեսով հողամասը կրկնաճուրդի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գները՝համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Աղյուսակ.

ՀՀ Դիլիջանի համայնքի ավագանու
2014թ. փետրվարի 25-ի թիվ 15-Ա որոշման

Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի ցանկ-վաճառք

Հ/հ	Լոտ	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /քմ/	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը	Օգտագործման նպատակը	Մեկնարկային գին	Սահմանափակումներ
1	Լոտ 1/ՔՀ-14/	Մոլդովական 2/5	0073-0116	59,4	Բնակավայրերի հող	հասարակական կառուցապատման	առևտրի տաղավարի կառուցման	148 500	չկան
2	Լոտ 2/ՔՀ-14/	Մոլդովական 2/6	0073-0117	59,4	Բնակավայրերի հող	հասարակական կառուցապատման	առևտրի տաղավարի կառուցման	148 500	չկան
3	Լոտ 34/ՔՀ-11/ կրկնաճուրդ	Աբովյան 62/1	062-002	270,0	Բնակավայրերի հող	այլ հողեր	բնակելի տան կառուցման	337 500	չկան

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի ՄՊ *Գ.Դավթյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2014թվականի N 16-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 4015.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 3 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2014թ. փետրվարի 3-ի թիվ 33-Ա որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 4015.0քմ ընդհանուր մակերեսով թվով 3 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտերով, պայմաններով և մեկնարկային գներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Դիլիջանի համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 4015.0քմ ընդհանուր մակերեսով, թվով 3 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրել և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Աղյուսակ.
Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու
2014թ. փետրվարի 05-ի թիվ 33-Ա որոշման

Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի կառուցապատման իրավունքի մրցույթ

Հ/հ	Լոտ	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /քմ/	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը	Օգտագործման նպատակը	Հողամասի տրամադրման ժամկետը	Կառուցապատման իրավունքի տուրքական վճարի մեկնարկային գին	Սահմանափակումներ
1	Լոտ 1/ՔԿ-14/	Պարզ լճի 18/1	0674-0033	1 000,0	Բնակավայրերի հող	հասարակական կառուցապատման	հասարակական նշանակության օբյեկտի կառուցման	մինչև 2030թ. դեկտեմբերի 31-ը	35 000 դրամ	չկան
2	Լոտ 2/ՔԿ-14/	Պարզ լճի 18/5	0674-0034	1 000,0	Բնակավայրերի հող	հասարակական կառուցապատման	հասարակական նշանակության օբյեկտի կառուցման	մինչև 2030թ. դեկտեմբերի 31-ը	35 000 դրամ	չկան
3	Լոտ 3/ՔԿ-14/	Կամոյի 131/3	0348-0035	2 015,0	Բնակավայրերի հող	հասարակական կառուցապատման	հասարակական նշանակության օբյեկտի կառուցման	մինչև 2030թ. դեկտեմբերի 31-ը	50 375 դրամ	չկան

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի ժ/պ *Գ. Դավթյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2014թվականի N 17-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 5880.0ՔՄ ԸՆՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2014թ. փետրվարի 3-ի թիվ 32-Ա որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 5880.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտերով, պայմաններով և մեկնարկային գներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Դիլիջանի համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 5880.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով տրամադրել և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Աղյուսակ.

Դիլիջանի համայնքի ավագանու 2014թ. Փետրվարի 05-ի թիվ 17-Ա որոշման

Դիլիջանի քաղաքային համայնքի Բնակավայրերի հողերի վարձակալության իրավունքի մրցույթ

Հ/հ	Լոտ	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /քմ/	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը	Օգտագործման նպատակը	Հողամասի տրամադրման ժամկետը	Վարձակալության իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գին	Սահմանափակումներ
1	Լոտ 1/Վ-14/	Պարզ լճի 18/2	0674-0026	4 080,0	Բնակավայրերի հող	հասարակական կառուցապատման	բարեկարգման	մինչև 2030թ. Դեկտեմբերի 31-ը	81 600 դրամ	չկան
2	Լոտ 2/Վ-14/	Պարզ լճի 18/4	0674-0023	1 800,0	Բնակավայրերի հող	հասարակական կառուցապատման	բարեկարգման	մինչև 2030թ. Դեկտեմբերի 31-ը	36 000 դրամ	չկան

Դիլիջանի համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար *Գ.Դավթյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2014թվականի N 18-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ.ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան քաղաքում 2014թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսների ընթացքում փողոցների սանիտարական մաքրման աշխատանքների կազմակերպման նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել ծառայությունների գնում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Դիլիջան քաղաքում 2014թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսների ընթացքում փողոցների սանիտարական մաքրման աշխատանքների կազմակերպման համար Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ. բյուջեի վարչական մասից «Աղբահանում» /բաժին 5, խումբ 1, դաս 1, հոդված 4213/ հատկացնել 24750000 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2014թվականի N 19-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Գետափնյա հասցեի բարձրահարկ բնակելի շենքերի բնակիչները շենքերի շքամուտքերը վերանորոգելու խնդրանքով:
Ուսումնասիրությամբ պարզվել է , որ նշված շենքերի շքամուտքերը դեռևս ԽՍՀՄ ժամանակներից չեն ենթարկվել վերանորոգման:Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել շենքերի շքամուտքերի հիմնանորոգման աշխատանքներ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է .

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոցի բնակելի շենքերի շքամուտքերի հիմնանորոգում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից «Բնակարանային շինարարություն» /բաժին 06 , խումբ 01, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 27337360 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2014թվականի N 20-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Կալինինի փողոցի բարձրահարկ բնակելի շենքերի բնակիչները նշված շենքերի դռներն ու պատուհանները վերանորոգելու խնդրանքով: Ուսումնասիրությամբ պարզվել է , որ նշված շենքերի դռներն ու պատուհանները դեռևս ԽՍՀՄ ժամանակներից չեն ենթարկվել վերանորոգման, բնակիչների անհոգի վերաբերմունքից, ինչպես նաև արտաքին ազդեցությունից գրեթե շարքից դուրս են եկել, մասնավորապես ապակիները մեծ մասամբ ջարդված են:
Համայքնի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կարճ ժամկետներում կատարել շենքերի մուտքերի դռների և միջանցքի պատուհանների վերականգնման աշխատանքներ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է .

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի բնակելի շենքերի դռների և պատուհանների փոխում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից «Բնակարանային շինարարություն» /բաժին 06 , խումբ 01, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 9069110 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2014թվականի N 21-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Մանթաշյան փողոցի բնակիչները դեպի Սայաթ-Նովա տանող ճանապարհի բարեկարգման խնդրանքով:
Ուսումնասիրությամբ պարզվել է , որ նշված ճանապարհահատվածը տարիների ընթացքում արտաքին ազդեցությունների հետևանքով ենթարկվել է ֆիզիկական մաշվածության, առաջացել են խորը փոսեր:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել սեղմ ժամկետներում կատարելու նշված հատվածի ճանապարհի բարեկարգման աշխատանքներ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է .

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Մանթաշյան փողոցի թիվ 1 տնից դեպի Սայաթ-Նովա փողոց հատման երթևեկելի մասի նորոգում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 13599390 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2014թվականի N 22-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Մյասնիկյան փողոցի 1-ին նրբ. բնակիչները դեպի գերեզմանատուն տանող ճանապարհի բարեկարգման և հենապատի կառուցման խնդրանքով:
Ուսումնասիրությամբ պարզվել է , որ նշված հենապատը և ճանապարհահատվածը տարիների ընթացքում արտաքին ազդեցությունների հետևանքով ենթարկվել են ֆիզիկական մաշվածության, առաջացել են խորը փոսեր:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել սեղմ ժամկետներում կատարելու նշված հատվածի հենապատի և ճանապարհի բարեկարգման աշխատանքներ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոցի 1-ին նրբ. դեպի գերեզմանատուն տանող ճանապարհի բարեկարգում և հենապատի կառուցում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 2263930 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2014թվականի N 23-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Կամո փողոցի բնակիչները Կամո 4 հասցեի տանը հարակից տարածքի վերանորոգման խնդրանքով:
Ուսումնասիրությամբ պարզվել է , որ նշված տարածքը տարիների ընթացքում արտաքին ազդեցությունների հետևանքով ենթարկվել է ֆիզիկական մաշվածության, առաջացել են խորը փոսեր:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել սեղմ ժամկետներում կատարելու նշված հատվածի փոսային նորոգման աշխատանքներ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Կամո 4 հասցեի տանը հարակից տարածքի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի փոսային նորոգում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 7983570 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2014թվականի N 24-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Շահումյան փողոցի 1-ին նրբ. բնակիչները ճանապարհի բարեկարգման խնդրանքով:
Ուսումնասիրությամբ պարզվել է , որ նշված ճանապարհը տարիների ընթացքում արտաքին ազդեցությունների հետևանքով ենթարկվել է ֆիզիկական մաշվածության, առաջացել են խորը փոսեր:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել սեղմ ժամկետներում կատարելու նշված ճանապարհի բարեկարգման աշխատանքներ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Շահումյան փողոցի 1-ին նրբ. ճանապարհի բարեկարգում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 5006730 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

7. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2014թվականի N 25-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել «Դիլիջանի երկրագիտական թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի պատկերասրահի հնագիտության և ազգագրության սրահների ցուցադրության կազմակերպման և կահավորման դիզայնի աշխատանքների գնում:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջանի երկրագիտական թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի պատկերասրահի հնագիտության և ազգագրության սրահների ցուցադրության կազմակերպման և կահավորման դիզայն» աշխատանքների գնման նպատակով Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ, բյուջեի ֆոնդային մասից «Թանգարաններ և ցուցասրահներ» /բաժին 08 , խումբ 02, դաս 02, հոդված 5113/ հատկացնել 10688280 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

7. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2014թվականի N 26-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 88/2 ՀԱՍՑԵԻ 37.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին են դիմել քաղաքացիներ Արծրուն Արմենակի Հովհաննիսյանը և Սոֆյա Արծրունի Հովհաննիսյանը՝ Գետափնյա փողոցի թիվ 88 հասցեի, իրենց համատեղ սեփականությունը հանդիսացող բնակելի տան 491.0քմ տնամերձ հողամասին կից գտնվող, Գետափնյա փողոցի թիվ 88/2 հասցեի 37.0քմ մակերեսով հողամասն ընդլայնման կարգով իրենց օտարելու խնդրանքով:

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 37.0քմ մակերեսով հողամասի օտարումն աճուրդային կարգով կխոչընդոտի անձի իրավունքը և օրենքով պահպանվող շահերը: Այն նպատակահարմար է օտարել ընդլայնման կարգով, վերը նշված բնակելի տան համասեփականատերեր Արծրուն և Սոֆյա Հովհաննիսյաններին: Նշված հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման իններորդ գոտում:

Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջանի Գետափնյա փողոցի թիվ 88/2 հասցեի 37.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 70818 դրամ արժեքով օտարել քաղաքացիներ Արծրուն Հովհաննիսյանին և Սոֆյա Հովհաննիսյանին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Դիլիջանի Գետափնյա փողոցի թիվ 88/2 հասցեի 37.0քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 70818 դրամ արժեքով, քաղաքացիներ Արծրուն Հովհաննիսյանին և Սոֆյա Հովհաննիսյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2014թվականի N 27-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 143 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի փոփոխությունը՝ (այսուհետ՝ Գլխավոր հատակագիծ) համաձայն հավելվածի:
2. Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 143 հոդվածի 5-րդ մասը, սույն որոշման 1-ին կետով սահմանված Դիլիջանի Կալինինի 4-րդ նրբ. 29/3 հասցեի, 11-003-0076-0024 ծածկագրով, 144.0քմ բնակավայրերի հողերը, Աբովյան 4/1 հասցեի, 11-003-0654-0001 ծածկագրով, 72.0քմ բնակավայրերի հողերը, Այգեստան 12/4 հասցեի, 11-003-0654-0001 ծածկագրով, 2025.0քմ գյուղատնտեսական հողերը, Շամախյան 164/2 հասցեի, 11-003-0002-0005 ծածկագրով, 2252.0քմ մակերեսով արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը, ըստ նպատակային նշանակության, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողերի կազմ:
3. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 143 հոդվածի 14-րդ և 30-րդ մասերով սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով արտացոլել սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 30-ի N 1723-Ն որոշմամբ հաստատված գլխավոր հատակագծում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Սյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2014թվականի N 28-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 143 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի փոփոխությունը՝ (այսուհետ՝ Գլխավոր հատակագիծ) համաձայն հավելվածի:
2. Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 143 հոդվածի 5-րդ մասը, սույն որոշման 1-ին կետով սահմանված 3875.0 քմ մակերեսով հողամասը, ըստ նպատակային նշանակության, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերից փոխադրել բնակավայրի հողերի կազմ՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման նպատակով:
3. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 143 հոդվածի 14-րդ և 30-րդ մասերով սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով արտացոլել սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 30-ի N 1723-Ն որոշմամբ հաստատված գլխավոր հատակագծում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2014թվականի N 29-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 143 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի փոփոխությունը՝ (այսուհետ՝ Գլխավոր հատակագիծ) համաձայն հավելվածի:
2. Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 143 հոդվածի 5-րդ մասը, սույն որոշման 1-ին կետով սահմանված, Դիլիջանի կադաստրային քարտեզի 1033-001, 1034-001, 977-001 և 159-003 ծածկագրերով հողամասերի հատվածը հանդիսացող՝ 3687.0քմ ընդհանուր մակերեսով հողամասը, ըստ նպատակային նշանակության, դիտարկել որպես բնակավայրերի հող, ըստ գործառնական նշանակության՝ հասարակական կառուցապատման:
3. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 143 հոդվածի 14-րդ և 30-րդ մասերով սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով արտացոլել սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 30-ի N 1723-Ն որոշմամբ հաստատված գլխավոր հատակագծում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2014թվականի N 30-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան քաղաքի սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքները առավել արդյունավետ և ժամանակին կատարելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել ձեռք բերել և քաղաքի տարբեր մասերում տեղադրել թվով 40 կենցաղային աղբաման:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Կենցաղային աղբամանների ձեռք բերում» ապրանքների գնման նպատակով համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից «Աղբահանություն» /բաժին 06 , խումբ 01, դաս 01, հոդված 5129/ հատկացնել 4000000 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2014թվականի N 31-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան քաղաքի աղբահանության աշխատանքները առավել արդյունավետ և ժամանակին կատարելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել ձեռք բերել աղբատար մեքենաներ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Աղբատար մեքենաների ձեռք բերում» ապրանքների գնման նպատակով համայնքի 2014թ. բյուջեի ֆոնդային մասից «Աղբահանություն» /բաժին 06 , խումբ 01, դաս 01, հոդված 5121/ հատկացնել 100000000 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
9. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
10. ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2014թվականի N 32-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՔԱՅԱԶՆ ՉԱՐԼԶԻ ԱՆՎԱՆ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել՝ քաղաքի փողոցներից մեկը Նորին Արքայական Մեծություն Ուելսի Արքայազն Չարլզի անվամբ անվանակոչելու մասին:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 21-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Դիլիջանի Գետափնյա աջ փողոցի Կալինինի փողոցին միացնող ավտոտրանսպորտային կամրջից դեպի Միջազգային դպրոցի ուղղությամբ փողոցը անվանակոչել Արքայազն Չարլզի անվամբ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
9. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
10. ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2014թվականի N 33-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՈՒ ԿՈՅՈՒՂՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 145 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2012թ. օգոստոսի 7-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի խմելու ջրի ու կոյուղու համակարգերը «Հայջրմուղկոյուղի» Փակ Բաժնետիրական Ընկերությանը անհատույց օգտագործման հանձնելու մասին» թիվ 145 որոշումը լրացնել 2-րդ պարբերությամբ.

«Անհատույց օգտագործման են հանձնվում նաև օրվա կարգավորիչ ջրամբարների՝ ՕԿՋ-ների, սանիտարական գոտիների հողերը:»

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ